Հավելված
ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ավագանու
2022 թվականի հունվարի 12-ի թիվ 19/Ն որոշման

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **4500 դրամ,**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **9000 դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ,**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ,**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **30000 դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **900 դրամ,**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500 դրամ.**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **900 դրամ,**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **1500 դրամ.**

Ծանոթություն՝ 1-ից 3-րդ կետերի համար կիրառված է 0.3 գործակից:

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

4.1) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

4.2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ.**

Ծանոթություն՝ 4-ից մինչև 4.2) կետերի նկատմամբ գործակից կիրառել արգելվում է:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

Ծանոթություն՝ 5-ից մինչև 5.2) կետերի նկատմամբ համայնքի բնակավայրերում կիրառել հետևյալ գործակիցները՝

- Նոյեմբերյան – 1
- Բերդավան-0.3
- Կոթի – 0.3
- Ոսկեվան- 0.3
- Ոսկեպար – 0.3
- Բաղանիս- 0.3
- Դովեղ – 0.3
- Բարեկամավան – 0.3
- Կողբ – 0.3
- Ջուջևան -0"5
- Այրում – 1
- Արճիս - 0.5
- Բագրատաշեն - 0.5
- Դեբեդավան - 0.5
- Դեղձավան – 0.5
- Զորական - 0.5
- Լճկաձոր – 0.5
- Հաղթանակ - 0.5
- Պտղավան – 0.5

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

Ծանոթություն՝ 6-րդ կետերի նկատմամբ համայնքի բնակավայրերում կիրառել հետևյալ գործակիցները՝

- Նոյեմբերյան – 1
- Բերդավան-0.3
- Կոթի – 0.3
- Ոսկեվան- 0.3
- Ոսկեպար – 0.3
- Բաղանիս- 0.3
- Դովեղ – 0.3
- Բարեկամավան – 0.3

- Կողբ – 0.3
- Այրում - 1
- Արճիս - 0.5
- Բագրատաշեն - 0.5
- Դեբեդավան - 0.5
- Դեղձավան – 0.5
- Զորական - 0.5
- Լճկաձոր – 0.5
- Հաղթանակ - 0.5
- Պտղավան – 0.5
- Ջուջևան – 0.5

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **քսան հազար դրամ.**

Ծանոթություն՝ 7-րդ կետերի նկատմամբ համայնքի սահմանամերձ բնակավայրում կիրառել հետևյալ գործակիցը՝

- Նոյեմբերյան – 1
- Բերդավան-0.3
- Կոթի – 0.3
- Ոսկեվան- 0.3
- Ոսկեպար – 0.3
- Բաղանիս- 0.3
- Դովեղ – 0.3
- Բարեկամավան – 0.3
- Կողբ – 0.3

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ.**

Ծանոթություն՝ 8-րդ կետերի նկատմամբ համայնքի բնակավայրում կիրառել հետևյալ գործակիցը՝

- Նոյեմբերյան – 1
- Բերդավան-0.3
- Կոթի – 0.3
- Ոսկեվան- 0.3
- Ոսկեպար – 0.3
- Բաղանիս- 0.3
- Դովեղ – 0.3

- Բարեկամավան – 0.3
- Ջուջևան – 0.5
- Այրում – 1
- Արճիս - 0.5
- Բագրատաշեն - 0.5
- Դեբեդավան - 0.5
- Դեղձավան – 0.5
- Զորական - 0.5
- Լճկաձոր – 0.5
- Հաղթանակ - 0.5
- Պտղավան – 0.5
- Կողբ – 0.3

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5000 դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12000 դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **16000 դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22000 դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **32000 դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50000 դրամ.**

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **5000 դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12000 դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **16000դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22000 դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **32000 դրամ.**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50000 դրամ.**

Ծանոթություն՝ 9-րդ կետերի նկատմամբ համայնքի բնակավայրում կիրառել հետևյալ գործակիցը՝

- Նոյեմբերյան –1
- Բերդավան-0.3
- Կոթի – 0.3
- Ոսկեվան- 0.3
- Ոսկեպար – 0.3
- Բաղանիս- 0.3
- Դովեղ – 0.3
- Բարեկամավան – 0.3
- Ջուջևան-0"5
- Այրում – 1
- Արճիս - 0.5
- Բագրատաշեն - 0.5
- Դեբեդավան - 0.5
- Դեղձավան – 0.5
- Զորական - 0.5
- Լճկաձոր – 0.5
- Հաղթանակ - 0.5
- Պտղավան – 0.5
- Կողբ – 0.3

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.**

Ծանոթություն՝ 10-րդ կետերի նկատմամբ համայնքի բնակավայրում կիրառել հետևյալ գործակիցը՝

- Նոյեմբերյան – 1
- Բերդավան-0.3
- Կոթի – 0.3
- Ոսկեվան- 0.3
- Ոսկեպար – 0.3
- Բաղանիս- 0.3
- Դովեղ – 0.3
- Բարեկամավան – 0.3
- Ջուջևան -0.5
- Այրում – 1
- Արճիս - 0.5
- Բագրատաշեն - 0.5
- Դեբեդավան - 0.5

- Դեղձավան – 0.5
- Զորական - 0.5
- Լճկաձոր – 0.5
- Հաղթանակ - 0.5
- Պտղավան – 0.5
- Կողբ – 0.3

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **25 000 դրամ,**

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50 000 դրամ,**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **200 000 դրամ,**

դ. խաղատների համար՝ **500 000 դրամ,**

ե. շահումով խաղերի համար՝ **250 000 դրամ,**

զ. վիճակախաղերի համար՝ **100 000 դրամ.**

Ծանոթություն՝ 11-րդ կետերի նկատմամբ համայնքի բնակավայրում կիրառել հետևյալ գործակիցը՝

- Նոյեմբերյան – 1
- Բերդավան-0.3
- Կոթի – 0.3
- Ոսկեվան- 0.3
- Ոսկեպար – 0.3
- Բաղանիս- 0.3
- Դովեղ – 0.3
- Բարեկամավան – 0.3
- Ջուջևան-0"5
- Այրում – 1
- Արճիս - 0.5
- Բագրատաշեն - 0.5
- Դեբեդավան - 0.5
- Դեղձավան – 0.5
- Զորական - 0.5
- Լճկաձոր – 0.5
- Հաղթանակ - 0.5
- Պտղավան – 0.5
- Կողբ – 0.3

12) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5000 դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7000 դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **14 00 դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **18 000 դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **24 000 դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **40 000 դրամ.**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000 մեկ դրամ,**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 դրամ,**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000 դրամ,**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8000 դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15 000 դրամ,**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **20 000 դրամ.**

Ծանոթություն՝ 12-րդ կետերի նկատմամբ համայնքի բոլոր բնակավայրում կիրառել 0.5 գործակիցը:

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **5000 դրամ.**

Ծանոթություն՝ 13-րդ կետերի նկատմամբ կիրառել 0.5 գործակիցը:

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ,**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ,**

գ. սոցիալական գովազդի համար՝ **զրո դրամ,**

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ,**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար **սահմանված տուրքի 25 %-ի չափով,**

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար **սահմանված տուրքի 10 %-ի չափով.**

Ծանոթություն՝ 14-րդ կետի նկատմամբ համայնքի բոլոր բնակավայրերում կիրառել 0.75 գործակիցը:

15) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

Ծանոթություն՝ 15-րդ կետի նկատմամբ համայնքի բոլոր բնակավայրերում կիրառել 0.5 գործակիցը:

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար դրամ.**

Ծանոթություն՝ 16-րդ կետի նկատմամբ համայնքի բոլոր բնակավայրերում կիրառել 0.5 գործակիցը:

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հինգ հարյուր հազար դրամ.**

Ծանոթություն՝ 17-րդ կետի նկատմամբ համայնքի բոլոր բնակավայրերում կիրառել 0.5 գործակիցը:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ,**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ.**

Ծանոթություն՝ 18-րդ կետի նկատմամբ համայնքի բոլոր բնակավայրերում կիրառել 0.5 գործակիցը:

19) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար **50 000 դրամ.**

20) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **10 000 ՀՀ դրամ,**

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **100 000 ՀՀ դրամ:**

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **5000 ՀՀ դրամ.**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **5000 ՀՀ դրամ.**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **3000 ՀՀ դրամ.**

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **3000 ՀՀ դրամ.**

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **մրցույթների մասնակցության համար՝ 20 000 ՀՀ դրամ, աճուրդներին մասնակցության համար՝ 30 000 ՀՀ դրամ, դիտորդների համար՝ 3000 ՀՀ դրամ**

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **300 ՀՀ դրամ /1 քմ-ի համար/**

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար.

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ **ամսական 100 ՀՀ դրամ կամ**

2) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **5 ՀՀ դրամ:**

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **50 ՀՀ դրամ**

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **20 ՀՀ դրամ.**

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 ՀՀ դրամ.**

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **երեք ՀՀ դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ ՀՀ դրամ.**

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից ՀՀ դրամ.**

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով.

7) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:

2.1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 ՀՀ դրամ:**

2.2. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ

աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ **մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ, կամ**

2) ըստ զանգվածի՝ **մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար դրամ.**

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար **ըստ ծավալի՝ 500 դրամ /1 խմ աղբի համար/, ըստ զանգվածի՝ 1000 դրամ /1տ աղբի համար/**

9) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց **փոխհատուցման վճարի չափով**

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց **1 մ ^{3} ջրի համար 150 դրամ**

Ծանոթություն՝ 10-րդ կետի նկատմամբ Բարեկամավան բնակավայրում 1 անձի համար ամսական կտրվածքով սահմանել արտոնություն՝ զեղջելով 1.5 մ ^{3} ջրի արժեքը:

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց **փոխհատուցման վճարի չափով,**

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց **փոխհատուցման վճարի չափով.**

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց **՝ ամսական 4000 ՀՀ դրամ**

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց **ամսական՝**

ա) Նոյեմբերյան համայնքի «Նոյեմբերյանի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ

- Դաշնամուր – 3500 դրամ
- Ակորդեոն – 3100 դրամ

- Կլարնետ – 2600 դրամ
- Երգեցողություն – 2600 դրամ
- Քանոն - 2600 դրամ
- Շվի - 2600 դրամ
- Դուդուկ – 2600 դրամ
- Այլ երաժշտական գործիքներ (ուդ, շեփոր և այլն) – 2600 դրամ
- Երկրորդ երաժշտական գործիքի դեպքում - տվյալ գործիքի վճարի 50%-ը

բ) Նոյեմբերյան համայնքի « Մշակույթի կենտրոն» հիմնարկ

- Պար –1500 դրամ
- Նկարչություն – 1000 դրամ
- Երգչախումբ – 2000 դրամ

գ) Նոյեմբերյան համայնքի «Համայնքային մարզադպրոց» ՀՈԱԿ-ի սաների համար՝ 1000 դրամ

դ) Նոյեմբերյան համայնքի «Բերդավանի Գարիկ Ալեքսանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ

- Դաշնամուր – 3 000 դրամ
- Այլ երաժշտական գործիքներ (քանոն, շվի, շեփոր, թառ, կլարնետ և այլն) – 2 200 դրամ
- Երգեցողություն – 2 200 դրամ
- Երկրորդ երաժշտական գործիքի դեպքում - տվյալ գործիքի վճարի 50%-ը:

ե) «Կողբի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ

- դաշնամուրի բաժնում --3000 դրամ
- ժողովրդական նվագարանների և կլարնետի վճարովի բաժիններում -- 2000դրամ:
- Երկրորդ երաժշտական գործիքի դեպքում - տվյալ գործիքի վճարի 50%-ը:

զ) «Այրումի երաժշտական դպրոց» ՝

- դաշնամուրի բաժնում՝ 2500 դրամ.
- ազգային նվագարանների բաժնում՝ 2000 դրամ.

է) «Բագրատաշենի երաժշտական դպրոց»՝

- դաշնամուրի բաժնում՝ 3000 դրամ.
- ազգային նվագարանների բաժնում՝2000 դրամ.

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **փոխհատուցման վճար՝ տաղավարը ժամը 2000 դրամ**

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **փոխհատուցման վճարի չափով՝ 100 դրամ 1 անձի համար**

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ **100 դրամ**
2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ **500 դրամ**
3) մեկ շաբաթվա համար՝ **1500 դրամ**
4) մեկ ամսվա համար՝ **6000 դրամ**
5) մեկ տարվա համար՝ **մինչև 30 000 դրամ ներառյալ:**

18) համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար **փոխհատուցման վճար՝ 500 դրամ**

19) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների՝ **0 դրամ**

20) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց **փոխհատուցման վճար՝ 2000 դրամ**

21) համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց **փոխհատուցման վճարի չափով՝ 0 դրամ**

22) Համայնքի սեփականությունը հանդիսացող մեքենա-մեխանիզմների միջոցով մատուցվող ծառայությունների դիմաց վճար

ա) Հատիկաընդեղենային կուլտուրաների հունձ՝ 1 հա-25 000 ՀՀ դրամ,
բ) Խոտհունձ ՝ 1 հա-15 000 ՀՀ դրամ,
գ) Խոտի հավաքում՝ 1 հա-8 000 ՀՀ դրամ,
դ) Խոտի հակավորում՝ 1 հակը- 120 ՀՀ դրամ,
ե) Վար՝ 1 հա-25 000 ՀՀ դրամ,
զ) Կուլտիվացիա ՝ 1 հա-13 000 ՀՀ դրամ,
է) Ցանքս ՝ 1 հա-13 000 ՀՀ դրամ,
ը) Հողային աշխատանքներ գրեյդերով՝ 1 ժամը – 15 000 ՀՀ դրամ,
(կազմակերպությունների համար՝իրենց ցանկությամբ՝1 ժամը – 10 000 ՀՀ դրամ + վառելիք)
թ) Հողային աշխատանքներ մինիամբարձիչով՝ 1 ժամը – **5000 ՀՀ դրամ**,
(կազմակերպությունների համար՝իրենց ցանկությամբ՝1 ժամը – 5 000 ՀՀ դրամ + վառելիք)
ժ) Հողային աշխատանքներ բազմաֆունկցիոնալ էքսկավատորով՝ 1 ժամը – **12 000** ՀՀ դրամ,
(կազմակերպությունների համար՝իրենց ցանկությամբ՝1 ժամը – 10 000 ՀՀ դրամ + վառելիք)
(ծառայությունների դիմաց սահմանված վճարը չի ներառում աշխատանքների կատարման վայր հասնելու համար պահանջվող ճանապարհածախսը):
ի) Բեռներ փոխադրում 10 տ բեռնատարողությամբ ինքնաթափով մինչև 10 կմ ՝ 1 կմ-ն՝ **1000 ՀՀ դրամ,**
ը) Բեռներ փոխադրում 10 տ բեռնատարողությամբ ինքնաթափով 10 ից 50 կմ ՝ 1 կմ-ն՝

800 ՀՀ դրամ,
թ) Բեռներ փոխադրում 10 տ բեռնատարողությամբ ինքնաթափով 50 կմ-ից ավել ՝ 1 կմ-ն՝ **700 ՀՀ դրամ,**

(բեռնափոխադրման համար կիլոմետրը հաշվվում է մեքենատրակտորային պարկից տվյալ տեխնիկայի դուրս գալու պահից և ավարտվում մեքենատրակտորային պարկում):

21) համայնքի սեփականությունը հանդիսացող միկրոավտոբուսների միջոցով մատուցվող ծառայությունների դիմաց վճար՝

ա) Ուղևորափոխադրումներ մինչև 10 կմ - 1 կմ-ն՝300 ՀՀ դրամ,

բ) Ուղևորափոխադրումներ 10 ից 100 կմ - 1 կմ-ն՝200 ՀՀ դրամ,

գ) Ուղևորափոխադրումներ 100 կմ-ից ավել - 1 կմ-ն՝ **100 ՀՀ դրամ,**

(ուղևորափոխադրման համար կիլոմետրը հաշվվում է մեքենատրակտորային պարկից տվյալ տեխնիկայի դուրս գալու պահից և ավարտվում մեքենատրակտորային պարկում):

22) Նոյեմբերյան համայնքի «Մշակույթի կենտրոն» հիմնարկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճար 1 անձի համար՝

ա) Մանկական թատրոն – 500 ՀՀ դրամ,

բ) Մեծահասակների թատրոն – 1000 ՀՀ դրամ,

գ) Համերգային միջոցառում – 500 ՀՀ դրամ,

դ) Կինոցուցադրում - 500 ՀՀ դրամ,

ե) Մուլտցուցադրում – 300 ՀՀ դրամ,

զ) Տիկնիկային ներկայացում – 300 ՀՀ դրամ,

է) Գեղարվեստաժամանցային շոու – 1500 ՀՀ դրամ

23) Նոյեմբերյան համայնքի «Մշակույթի կենտրոն» հիմնարկի դահլիճը և սրահները միջոցառումներ անցկացնելու նպատակով տրամադրելու համար սահմանել վարձավճար.

ա) Միջոցառման համար վաճառված տոմսերի ընդհանուր գումարի 20%-ի չափով,

բ) Միջոցառումներ անցկացնելու նպատակով որպես վարձակալության միանվագ գին դահլիճի համար սահմանել 20 000 ՀՀ դրամ,

գ) Միջոցառումներ անցկացնելու նպատակով որպես վարձակալության միանվագ գին սրահների համար սահմանել 5 000 ՀՀ դրամ,

24) Նոյեմբերյանի ՔԿԱԳ մարմնի կողմից աշխատավայրից դուրս ամուսնությունների գրանցման համար տեղական վճար սահմանել 20 000 ՀՀ դրամ: